№ 5 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 12 ՅՈՒՆՎԱՐԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կես տարվանը 6 բուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Խմբագրատան տէլէֆօն № 253.

№ 5 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 12 ՅՈՒՆՎԱՐԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1911 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(39-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 բ., 10 ամսվանը 9 բ., 9 ամսվանը 8 բ., 8 ամսվանը 7 բ., 7 և 6 ամսվանը 6 բ., 5 ամսվանը 5 բ., 4 ամսվանը 4 բ., 3 ամսվանը 3 բ., 2 ամսվանը 2 բ., 1 ամսվանը 80 կ. և 20 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դօլար. Եւրօպայի բաժանորդները 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները 10 բուբլի. Թիւրքիայի բաժանորդները 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն, և մինչև ժամանակ 40 կոպ. նամակադրոշմ։

Հին բաժանորդներից խնդրվում է կացնել փոխադրական բանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“. Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSHAK“.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ

յիշեցնում է քաղաքային ջրմուղու արօնեններին, որ ջրաչափները սառչելուց պահպանելը, համաձայն ջրից օգտվելու կանոնադրութեան § 8-ի, իրանց՝ արօնենների պարտականութիւնն է, որի համար և Ուղղական խնդրում է վաղօրօք միջոցներ ձեռք առնել՝ ջրի մատակարարութեան ընդհատումից և ջրաչափը նորոգելու ծախքերից խուսափելու համար։ 31. 1—1

Открытая подписка на 1911 годъ
на ежедневную политическую, литературную и экономическую газету

6-ой годъ изданія. РѢЧЬ 6-ой годъ изданія.

Издаваемую въ С.-Петербургѣ
В. Д. Набоковымъ и И. И. Петрункевичемъ
при ближайшемъ участіи
П. Н. Милюкова и І. В. Гессена
и при прежнемъ составѣ сотрудниковъ.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

	12 м.	9 мѣс.	6 мѣс.	5 мѣс.	4 мѣс.	3 мѣс.	2 мѣс.	1 мѣс.
Въ Россіи Р.	12.—	9.—	6.—	5.10	4.15	3.15	2.15	1.10
За границу Р.	20.—	15.75	11:—	9.50	7.75	6.—	4.—	2.—

Для сельскихъ священниковъ и учителей, для учащихся въ высшихъ учебныхъ заведеніяхъ, фельдшеровъ, крестьянъ, рабочихъ и приказчиковъ ПРИ НЕПОСРЕДСТВЕННОМЪ ОБРАЩЕНІИ ВЪ ГЛАВНУЮ КОНТОРУ на 12 м.—9 р., 9 м.—6 р. 75 к., 6 м.—4 р. 50 к., 3 м.—2 р. 40 к., 1 м.—85 к.

АДРЕСЪ ГЛАВНОЙ КОНТОРЫ ГАЗЕТЫ „РѢЧЬ“:
Спб., улица Жуковскаго, 21.

Пробные №№ газеты „РѢЧЬ“ для ознакомленія высылается безплатно.

2—1

ԵՐԵՒԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ
ԹԱՏՐՕՆ Ե. Ֆ. ՋԱՆՓՕԼԱԴԵԱՆԻ

Երևանի նախկին ակումբի շէնութիւնը, հիմնական վերաշինութեամբ, յարմարեցված է յատկապէս թատրոնի համար։ Առանձին պատուէրով բերված է բոլորովին նոր, շքեղ դեկորացիաներ։ Կան բուտաֆոր, բէկվիզիտ և ամեն յարմարութիւններ։

Պ.պ. սիրողները կարող են դիմել. (Въ гор. Эривань, Театръ ДЖАНПОЛАДОВА. (Тифлисъ, Контора „Энергія“. Пушкинск. № 3.

(չ. 2.) առ. 1404. 15—5

Ցանկանալով կարելիութիւն տուած լինել սակաւ միջոց ունեցող անձերին ևս համեմատաբար էժան գնով ծխելու ԱՄԵՆ ՄԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ԲԱՒԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՏՈՒՌՈՂ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ,

Ա. ԷՆՖԻԱՃԵԱՆՑԻ
ՖԱԲՐԻԿԱՆ
ԲԱՑ Է ԹՈՂԵԼ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ
„ԼԷՎ“ 20 ՀԱՏԸ 5 Կ.

„ԼԷՎ“ պապիրոսները այնքան ԼԱՒ են ամեն մի կողմից, որ անկարելի է մտածել, թէ որևէ, մէկը եթէ փորձել է այդ պապիրոսները, մշտական չը ծխէ դրանց, որպէս

ԱՄԵՆԱԼԱՒ ՊԱՊԻՐՈՍ
ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ
ՆՈՅՆՆԵՐՓԷԷՔ ՊԱՊԻՐՈՍՆԵՐԻՑ

(չ.ու.կ.) առ. 1428. 10—6

ԱՌԱՋԻԿԱՑՈՒՄ

II

Հայ կեանքում 1911 թուին որոշ տեղ են բռնելու կաթողիկոսական ընտրութեան և էջմիածնի հետ կապված կրթական և անտեսական խնդիրները։

Իզմիրլեանի վաղաժամ մահը ոչ միայն զրկեց մեզ մի արժանաւոր խոշոր անձնաւորութիւնից, այլ և դժուար կացութեան մէջ դրեց մեզ ընարողներս, որովհետև հոգևորականութեան ներկայ կազմի մէջ՝ իրանց գրաւված ներկայ դիրքերում՝ հանդէս չեն գալիս այնպիսի անուններ, որոնք բան ամենայնի գոհացնէին ընտրողների պահանջները։

Հրապարակի վրա յիշվել են մի քանի անուններ, բայց նրանք չեն կրում իրանց վրա որոշ խմբերի կողմից առաջարկված թեկնածուների բնաւորութիւն, այլ ասպարէզ են հանվել իբրև ենթադրելիներ ընտրական ցուցակի համար։

Իւրաքանչիւր անուան հետ կապված են մի քանի արժանաւորութիւններ, բայց իրանց ամբողջութեամբ այդ արժանաւորութիւնները այնքան խառնված չեն թեկնածուների շուրջը, որ վերջիններս անունները հանդէս գային ներկայումս իբրև ժողովրդականութիւն վայելող անուններ։

Տարվայ ընթացքում կը յայտնվեն բազմաթիւ խորհրդածութիւններ վերաբերեալ թէ կաթողիկոսական գործունէութեան ծրագրին առնչակցող և թէ յատուկ անձնաւորութիւնների գնահատման։

Այդտեղ պահանջվում է, որ մեր հասարակութիւնը ուշադրութեան առնելով թէ ինչ պայմաններում և հանգամանքներում է գործում կաթողիկոսը, կարողանայ հարգասօրէն վերաբերվել իր առաջ դրված հարցին և կատարի իր ընտրութիւնը, ղեկավարվելով գործի և խնդրի էութեան թելադրանքով և ոչ նեղ կողմնակի հաշիներով։

Մինչև կաթողիկոսի ընտրութիւնը և իր պաշտօնի ստանձնելը բազմաթիւ խնդիրներ սպասում են իրանց քննութեան և մշակութեան, իսկ ընթացիկ գործերը իրանց հերթական լուծման։

Մի շարք այնպիսի խնդիրներ, ինչպէս են կրթական գործի կանոնաւորումը գպրոցներում, թեմական խորհուրդների նպատակայարմար գործավարութիւնը, կալուածական գործերի բարւոքումը, շինարարական, ջրաշխական և ուրիշ ներքին անտեսական խնդիրները պահանջում են լուրջ հոգատար վերաբերմունք տեղապահի, միաբանութեան և հասարակական կարծիքի կողմից։

Մեր հասարակութիւնը, որ վերջին տասնեակ տարիներում հանդէս է բերել մի շարք կուլտուրական գործօններ՝ գրականութիւն, թատրոն, ընկերութիւններ, կրեդիտային հիմնարկութիւններ, ակումբներ, գրադարաններ, չէ կարողանում օգտվել նրանցից այն ընդարձակ ծաւալով, որով պէտք են գնում Արևմուտքում և որը կարող էր հաստատ կուլտուրական դիրք ապահովել նրա համար։ Կեանքի մէջ։

Մենք երբէք չը պէտք է մոռանանք, որ այդ գործօններից իւրաքանչիւրը կարօտ է իր ժրջան մշակներին, իր անձնուէր գործողներին և հասարակութեան զգայուն աջակցութեան։

Իւրաքանչիւր տարին պէտք է մի լուրջ քայլ, մի հաստատ կուլտուրական նուաճում աւելացնի անցած ճանապարհի վրա, որպէսզի կարելի լինի յուսալ բեղմնաւոր արդիւնքի այդ գործօններից։

Եւ 1911 թուի վրա ծանրանում է այդ պարտականութիւնը, որը պէտք է կատարեն նրան բարեմաղթութիւններով և ողջոյններով դիմաւորող հասարակութեան անդամները։

Ա. Բալանթար

ԿՐԷՏԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Կրէտական հարցը վերստին իր վրա է բևեռում քաղաքակիրթ աշխարհի ուշադրութիւնը։

Ցուսահատվելով աջակցութիւն գտնել հովանաւորող-պետութիւններից, կրէտացիները այժմ իրանց հայեացքները դարձրել են Ամերիկայի կողմը։ Սրանից մի քանի օր առաջ կրէտական պատգամաւորութիւնը ընդունվեց Վաշինգտոնում նախագահ Տաֆտից և արտաքին գործերի մինիստրից։ Պատգամաւորութիւնը խնդրեց, որպէսզի հոգը Միացեալ Նահանգները պաշտպանեն կղզին՝ չը միացնելու Յունաստանի հետ։ Պատգամաւորութեան խնդիրը քննութեան խնդիր է դառնալու ամերիկեան կօնգրէսի մէջ։

Չէ կարելի հասարակ զուգադիպութեան վերագրել այն հանգամանքը, որ պատգամաւորութեան Վաշինգտոն գալու հետ համարեա միաժամանակ ամերիկեան ազդեցիկ լրագիրներ եռանդուն պրոպագանդա սկսեցին յօգուտ Կրէտէի։

Մի կրակոտ յօդուած այդ հարցի առիթով տպված է „New-York Herald“-ի մէջ։

«Կրէտական պրօբլէմը—ասում է լրագիրը,—մինչև ծայրայեղութիւնը բարդ չէ, թէև մեծ պետութիւնները արին արդէն իրանցից բոլոր կախվածը։ Նրա լուծումը նոյն տեսակ պարզ է և չէ կարող սպասնալ ոչ մի վտանգ։ Արդէն մի տարուց աւելի է կրէտացիները ձգտում են դէպի Յունաստան։ Թէև կղզին պատկանում է Թիւրքիային 1669 թուից, սակայն ազգաբնակութիւնը մնացել է յոյն թէ լեզուով, թէ ազգութեամբ և թէ կրօնով։ Իրապէս Կրէտէն այժմ անկախ է։ Թիւրքիան այժմ այնտեղ վարչական իշխանութիւն չէ պահում, հարկեր չէ ժողովում և իր գերիշխանութիւնը ցոյց է տալիս միայն նրանով, որ ոչ հեռու Նաւահանգստից ծածանեցնում է իր դրօշակը։ Կրէտացիների պահանջն է—վաւերացնել իրանց արդի կացութիւնը։

Լուրջ արգելքներ այդ վաւերացման համար չը կան։ Դրա համար ոչ մի բռնի միջոցներ հարկաւոր չեն։ Թիւրքիան, հաւանօրէն, գիւրութեամբ զիջումներ կանէր, եթէ միայն մեծ պետութիւնները մի հաւաքական առաջարկութիւն անեն Կրէտէն Յունաստանին յանձնելու մասին դրամական կամ այլ վարձատրութեամբ։

Դրա համար հարկաւոր է ներկայ բոպէին սոսկ մի բան. որևէ մեծ պետութիւն իր վրա նախաձեռնութիւն վերցնէ և առաջարկէ համապատասխան նախագիծ եւրօպական կոնցերտին։ Այդ պետութիւնը պէտք է լինի Ֆրանսիան—պատմութեան տրադիցիոն պաշտպանը... «Այժմ,—ասում է „Herald“-ը—Պիշոնի համար ներկայանում է յարմար առիթ բարձրացնել Ֆրանսիայի պրեստիժը արտասահմանում և ապահովել իրան պատուաւոր տեղ Կավուրի և Գլադստոնի շարքում—ճնշված ազգերի այդ հովանաւորողների և մեծահոգի պաշտպանների կողքին... Նա պէտք է առաջինը իր ձայնը հնչեցնէ յօգուտ Կրէտէի ազատագրութեան դարաւոր ճնշումից»։

„Herald“-ի յօդուածը Ֆրանսիայում ըստ երևոյթին թողեց մեծ տպաւորութիւն, որովհետև մի օրում յօդուածը երևաց պարիզեան բոլոր լրագիրներում։ Դժուար է, ի հարկէ, յայտ դնել, որ „Herald“-ի նախագիծը այժմ ևեթ կիրականանայ։ Սակայն կրէտացիների համար կարևոր է արդէն այն, որ նրանց գործի համար ապաբէդ է եկել պետութիւններից ամենաազդեցիկը՝ «վեցերորդ պետութիւնը»...

ԹԻՒՐՔԻԱՅԻ ԾՈՒՐՋԸ

Կ. Պոլիս, 9 յունվարի

Մեծ տպաւորութիւն է թողնում պարլամենտական շրջանները քրիստոնեայ, յոյն, հայ, բուլգար, սերբ և արաբ պատգամաւորների համաձայնութիւնը։ 45 քրիստոնեայ պատգամաւորներ որոշեցին գործել լիակատար համաձայնութեամբ, միանալով մահմեդական օպոզիցիայի հետ պատում։

Կ. Պոլիս, 9 յունվարի

Պատասխանելով պատում պօտսդամեան տեսակցութեան մասին արած հարցապնդման, Ռիֆաթ փաշան յայտնեց, որ Թիւրքաց կառավարութիւնը տեղեկութիւն ունէր այն մասին, որ բանակցութիւնները Պոտսդամում կը վերաբերվեն բացառապէս պարսկական երկաթուղիներին։

Կ. Պոլիս.—Եմէնում ապստամբների թիւը հասնում է 40,000-ի։ Կառավարութիւնը ուղարկում է երեք զօրաբանակ, տաս լեռնային բատարէա և երեք գնդակաձիգ վաշտեր։ („Ե.“)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԾՈՒՐՋԸ

Թէհրան, 9 յունվարի

Մեծ-բրիտանական դեսպանը արտաքին գործերի մինիսարին յանձնեց մի նոտա, որով գոհունակութիւն է յայտնվում պարսից կառավարութեան ձեռք առած միջոցների առիթով—հարաւային ճանապարհների վրա անվտանգ դրութիւն պահպանելու համար։ Մեծ-բրիտանական կառավարութիւնը չէ պնդում շուտափոյթ զօրախմբեր կազմել անգլիական օֆիցէրների հրամանատարութեամբ, թողնելով իրան իրաւունք՝ կազմակերպել այդ տեսակ պաշտպանողական խմբեր այն դէպքում, երբ պարսից կառավարութեան միջոցները պակասաւոր կերևան։

Ուրմիա, 9 յունվարի

Թիւրքաց զօրքերի թիւը Սուլդուզում հասցված է մինչև 800 մարդու և ութ թնդանօթների հասցրած։ Գլխաւոր բանակատեղին գտնվում է Գիւրէուում, լճից չորս վերստ հեռաւորութեան վրա։

Լոնդոն.—Մեհրդից հաղորդում են, որ այնտեղ բնակիչները վճռել են բոյկոտի ենթարկել ռուսական ապրանքները, քանի որ ռուս զօրքերը կը մնան Պարսկաստանում։

Թէհրան. — Մէջլիսի մասնաժողովին ներկայացվեց առաջին բիւջէն։ Եկամուտները հաշված են 140 միլիոն կրօն։ Սպասվում է աննշան դեֆիցիտ։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 9 յունվարի

Թագաւոր Կայսրին ներկայացաւ Շալեապինը։

Ստացվում են առատ նուիրատուութիւններ երկրաշարժից փլատակների օգտին։

Պարիզ, 9 յունվարի

Պատգամաւորների պալատում Վալիանը առաջարկեց կառավարութեանը գումարել միջազգային կոնֆերէնցիա խօլերայի դէմ կռուելու հարցի համար։ Բրիանը պատասխանեց, որ առողջապահութեան խնդրի վերաբերեալ կոնֆերէնցիայի գումարումը վերջերս վճռվեց։

Տոկիո, 9 յունվարի

Պալատին ներկայացվեց բիւջէի նախագիծը։ Սովորական եկամուտները հաշված են 492 միլիոն իէն, արտակարգ եկամուտները՝ 59. սովորական ծախքերը կազմում են 407, արտակարգերը 144 միլիոն իէն։

Տոկիո, 9 յունվարի

Երէկ բացվեց պարլամենտի նստաշրջանը. մինիստր-նախագահը իր ճառում ընդգծեց Եապոնիայի բարեկամական յարաբերութիւնները բոլոր պետութիւնների հետ, և ասաց, որ Անգլիայի հետ կնքված համաձայնութիւնը ժամանակի ընթացքում աւելի ևս կամրապնդվի. յոյս յայտնեց, թէ առանց դժուարութիւնների նոր պայմանագրեր կը կապվեն բոլոր պետութիւնների հետ. յայտնեց, որ կառավարութիւնը շարունակելու է իր նախկին ֆինանսական քաղաքականութիւնը և սահմանափակելու է սպառազինման ծախքերը։

Զիտա, 9 յունվարի

Մանջուրիայում համաճարակի սկզբից ժամանակով հիւանդացել են 831 չինացիներ, 24 եւրօպացիներ, մեռել են 821 չինացիներ, 24 եւրօպացիներ։

Կահիրէ, 9 յունվարի

Ազգային կուսակցութեան անդամների ընդհանուր ժողովը հեռագրով անգլիական արտաքին գործերի մինիստրին և Թիւրքաց մեծ վէզիրին յայտնեց բոլոր օկկուպացիայի դէմ և հեռագրով դիմեց խրդիվին խնդրելով շնորհել սահմանադրութիւն։

Աթէնք, 9 յունվարի

Բացվեց ազգային ժողովը։

Վիէննա, 9 յունվարի

Լրագիրները արտատպում են Բերլինի «Ֆոսիշէ-Ցայտունգի» մերկացումները՝ իբր թէ սերբիական գահաժառանգ Դէօրդին պատրաստվելիս է եղել մահափորձ կատարել արքայազուս Ֆրանց-

Ֆերդինանդի կեանքի դէմ, երբ վերջինս ճանապարհորդում էր 1909 թուին կամ Մօրավիայի զօրախաղերի ժամանակ, լրագիրը պնդում է՝ իբր ձեռք են ձգված փաստաթղթեր, որոնք ապացուցանում են գահաժառանգի յանցանքը։ Այդ առիթով «Ցայտը» ասում է. «Ֆօսսիշէ-Ցայտունգի» ֆանտաստիկ նկարագրութիւնը զարմանալի կերպով յիշեցնում է Էրէնտալի սերբական գաղտնի մատնութիւնները»։

—

Պետերբուրգ. — Մենշիկովը „Новое Время“-ում պատասխանում է հայ քահանաներին, ապացուցելով հայ եկեղեցու հերետիկոսութիւնը։ «Ամենայն Հայոց Կաթողիկոսի թաղմանը ուղղափառ հոգևորականութեան և աշխարհիկ իշխանութեան ներկայացուցչութիւնը—ասում է այնուհետև Մենշիկովը,—էջմիածնին դարձնում է հայկական Հէլսինգֆօրս»։

Արևելեան ճեմարանին կից բացվեցին կովկասեան լեզուների դասընթացքներ դատական պաշտօնեաների համար։ Պարապմունքների ծրագիրը մշակել է պրոֆ. Մարրը։ Դասընթացքների համար առ այժմ գրվել են 30 հոգի։ Դասաւանդվում են հայերէն, վրացերէն և թուրքերէն։ Դասախօսներն են Ադոնց, Կիպիշիձէ և Շապշալ։

Մինիստրների խորհրդում քննվում է հնդկական մեծ երկաթուղու հարցը։ Արտաքին գործերի մինիստր Սազօնովը համակրում է նախագծին։ Կոնցեսիօներները հրաժարվում են ամեն տեսակ նպաստներից։

Ժողովրդական լուսաւորութեան մինիստր Կասսօն Պետական Դումային ներկայացրեց մի նախագիծ, որով առաջարկում է պարտաւորեցնել քաղաքային և զէմստվային հասարակական վարչութիւններին գումարներ յատկացնել ընդհանուր կրթութեան համար։

(„Б.“)

—

Մոսկվա.—Համալսարանից անկարգութիւնների համար արձակվեցին 18 ուսանողներ, գիւղատնտեսական ինստիտուտից՝ 5 և տեխնիկական դպրոցից՝ 3 հոգի։ („Б.“)

—

„Norddeutsche Allg. Zeit.“-ը գերմանական պետութեան 40-ամեակին նուիրել է մի ընդարձակ յօդուած, ուր հպարտութեամբ մատնանշում է այն աջողութիւնների վրա, որ ձեռք է բերել գերման ժողովուրդը այդպիսի կարճ ժամանակամիջոցում. դատապարտում է գերմանական ժողովրդի լաւատեսութիւնը, բայց և միևնոյն ժամանակ զգուշացնում է աւելորդ ինքնագոհութիւնից։

—

Պարիզի պատգամաւորների պալատում ծօրէսը առաջարկութիւն արաւ պայմանագրեր կապել բոլոր երկիրների միջնորդ դատարանի մասին։ Առաջարկութիւնը յանձնվեց արտաքին գործերի մանամասնողին։

—

Ազգային ինքնապաշտպանութեան յունական կոմիտէը վճռել է բաւականաչափ ուժեղացնել հեծելազօրը։ Ինչպէս տեղեկացել է „Echo de Paris“-ի թղթակիցը, կառավարութիւնն արդէն բանակցութիւններ է սկսել Կրէտոյի և Կրուպպի գործարանների հետ. առաջինը համաձայնել է կառավարութեանը վստահանալ 8 միլիոն դրախմ, երկրորդը՝ անսահմանափակ պարտք։ Իբրև ապահովութիւն առաջարկված է պաշտպանութեան գանձարկղի եկամուտները։ Այսօրերս տեղի կունենայ կոմիտէի նիստը գահաժառանգ արքայորդու նախագահութեամբ, ըստ որում կը վճռվի յիշեալ գործը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԷՋՄԻԱԾՆԻՑ

—

Մենք մեկնեցինք Էջմիածնից (երկու օր այնտեղ մնալուց յետոյ) լի մխիթարական և յուսահատեցուցիչ տպաւորութիւններով, ինչպէս և միւս պատգամաւորները, որոնք ներկայ էին Վեհափառի թաղմանը։ Այս տպաւորութիւնները յարուցանում են մի շարք հարցեր, որոնք կապ ունեն մեր եկեղեցական-ազգային շահերի հետ։ Ուստի մենք պարտաւոր ենք զգում մեզ անկեղծօրէն բաժին հանել հասարակութեան մեր ստացած տպաւորութիւններից։

Մեր բարձր հոգևոր անձնաւորութիւնների վերաբերմամբ վատ կարծիքներ յայտնելը դառել է մի շատ հեշտ և հանրամատչելի քննադատական ձև։ Ընդունված է, որ ամեն կը սազի մեր եպիսկոպոսներին ու վարդապետներին։ Եւ աննպաստ կարծիք յայտնելը այս ինչ վարդապետի, այն եպիսկոպոսի մասին մի lieu commun-է դառել, աւելին, լիբերալի մի արտայայտութիւն է կարծվում։

Այս յոռետես հայեացքը մեր հոգևորական դասակարգի և յատկապէս Էջմիածնի միաբանութեան վրա որոշ հիմք ունի։

Հոգևորականութիւնը մինչև վերջին քառորդ դարը, իրաւ որ, կիսաուսների միապաղաղ զանգված էր ներկայացնում, քիչ բացառութիւններով։ Մեր կաթողիկոսները շրջապատված են եղել անպատրաստ միաբաններով, չը ճանաչող իրանց պարտականութեան վեհութիւնը և դժուարութիւնը։ Ուստի մեր հայրապետներին մնում էր մի երեք այն է, այդ պակասը լրացնել աշխարհականների միջամտութեամբ։ Եւ յիրաւի, երբ ծարմներից որին պատուէրներ ապ—Ֆրանսիականին թէ՞ գերմանականին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՏԱԴԻՐ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Թիֆլիս քաղաքի բնակիչների համար սահմանաբական մասի վերաբերեալ, հրատարակված Թիֆլիսի նահանգապետի կողմից ժամանակի առաջն առնելու նպատակով։

—

1) Թիֆլիսի տնատէրերը պարտաւոր են միջոցներ ձեռք առնել ոչնչացնելու մկներին իրանց տներում քաղաքային սանիտարական մարմնի ցուցումներով։

2) Հասարակական տեղերի, այսինքն՝ հիւրանոցների, կահաւորված սենեակների, պանդոկների, ճաշարանների, գինետների և նման հաստատութիւնների, նաև խանութների և պահեստների, հացատների, գործարանների և իշխանատների տէրերը պարտաւոր են երկու շաբաթվայ ընթացքուն, այս պարտադիր որոշումները հրատարակելու օրից հաշուած, ծածկել իրանց հաստատութիւնների բոլոր ծակերը, որոնց միջով կարող են մկները մտնել, ձեռք բերել անհրաժեշտ քանակութեան մկան թակարներ և գնել այդպիսիները համապատասխան տեղերում։

3) Բռնած կամ գտած սպանված մկներին պէտք է ոչնչացնել տեղն և եթէ կամ պէտք է տանել քաղաքային վարչութեան ցոյց տուած տեղերը։ Իսկ աղբի արկղներ կամ փողոց նետելը արգելվում է։

Ծանօթ.—Քաղաքային վարչութիւնը ամեն մի բռնած մկան համար վճարում է 5 կոպէկ։

4) Այն տների տէրերը, որոնց մէջ գըտնվում են փոռ, կօնդիտերսկիներ, մսի և ձկան խանութներ, կոլբասի արհեստանոցներ, բակալէյնի, կոլօնիալի և գաստրոնոմիայի կրպակներ, որոնք ներքին յարկերումն են, գետնին հաւասար, պարտաւոր են մի ամսվայ մէջ փայտէ յատակները փոխարինել ցեմենտով կամ ասֆալտով։

5) Այս պարտադիր կանոնները խախտողները ենթարկվում են մինչև 3 ամսով բանտարկութեան կամ մինչև 300 ր. տուգանքի։

6) Այս պարտադիր կանոնները այժ են ստանում «Кавказъ» լրագրում հրատարակվելու օրից։

Իսկականի վրա ստորագրել է՝ «Հաստատում եմ» Նահանգապետի պաշտօնակատար

Ա. Զերնեավսկի

ՓՈՔՐ-ԱՍԻԱՑԻ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՆՈՒԱՃՄԱՆ ԽՆԴՐԻ ԱՌԻԹՈՎ

I

Ցայտնի է, որ զարգացող ռուս արդիւնաբերությունը վերջերս, նամանաւանդ Հեռաւոր Արևելքի շուկաների նուաճման յոյսը կորցնելուց յետոյ, աւանդին ուշադրութիւն է սկսել դարձնել Մերձաւոր Արևելքի վրա, ամեն կերպ աշխատելով սերտ առևտրական կապեր հաստատել նրա շուկաների հետ։ Արդարև, այստեղ Ռուսաստանը կարող է սպառել բաւականաչափ ապրանքներ, քանի որ այդ երկիրներում կապիտալիստական արտադրութիւնը կամ խպառ բացակայում է, կամ գտնվում է սաղմային դրութեան մէջ։

Այն էլ պիտի ասել, որ մի շարք առաւելութիւններ հեշտացնում են ռուսական առևտրի գործը։ Դրանք են և Ռուսաստանի նպաստաւոր աշխարհագրական դիրքը Մերձաւոր Արևելքում և երկու երկիրների ազգաբնակչութեան մի մասի ցեղական-էթնոգրաֆիական միութիւնը և այլն։ Ռուս կառավարութիւնն էլ, հանդէպ գալով ֆաբրիկանտների ջանքերին մի կողմից իր գործակալների՝ հիւպատոսական մարմնի միջոցով աշխատում է ուսումնասիրել այդ շուկաների դրութիւնը, միւս կողմից ձեռնարկում է մի շարք միջոցների, որոնք նպատակ ունին մօտուց ծանօթացնել Մերձաւոր Արևելքին ռուսական ապրանքների հետ, յիշեք, օրինակ, վերջերս իշխան Ն. Ամատունու ղեկավարութեամբ կազմակերպած լրացող ցուցանդէսը, որ այցելեց Թիւրքիայի, Բուլգարիայի և Պալկանների նաւահանգիստները և ունեցաւ խոշոր աջողութիւն։

Մերձաւոր Արևելքի նշանաւոր շուկաներից անշուշտ ամենառաջինը Թիւրքիան է, որի հետ մեր առևտուրը մինչև վերջերս շատ չնչին ծաւալ է ունեցել շնորհիւ նախկին սուլթանական ըէժիմի. տես մեր յօդուածը «Ռուս-Թիւրքական առևտուրը»—«Մշակ» 1909 թ. № 165)։ Թիւրքիայի ներկայ ըէժիմը այժմ յոյս է տալիս, որ երկիրը մի քիչ կը խաղաղվի, տնտեսապէս կը կարգաւորվի, մի յոյս, որ եռապատկել է եւրօպացիների ջանքերը՝ այդ երկրի հետ առևտրական կապեր հաստատելու գործում։ Եւ Թիւրքիայի շուկաների, մանաւանդ Փոքր-Ասիայի ռուսաց սահմանակից երկիրների, առևտրական նուաճման հարցը այժմս չէ իշնում ռուս մասնագիտական հրատարակութեան էջերից։ Հետևեալ անգամ մենք կը ծանօթացնենք «Մշակի» ընթերցողներին Վանի ռուսական փոխհիւպատոսի հաղորդագրութիւնների հետ, ի լրումն այն տեղեկութիւնների, որ մենք հաղորդել էինք 1909 թուին «Մշակի» № 191-ում («Վանի առևտուրը»), միանգամայն համոզված լինելով, որ երկու երկիրների հայերի առաջ բացվում է առևտրական մի նոր ասպարէզ, կատարել երկու երկիրների արտահանութեան և ներմուծման գործում այդ դերը, որ նրանք ունեցել են Պարսկաստանի հիւսիսային մասում։ Այդ կատարելիք դերի մասին մենք հրաւիրել էինք հայ վաճառականների ուշադրութիւնը վերև յիշած յօդուածներով, իսկ նորերս նոյնը պնդել էր Ա. Քալանթարը իր առաջնորդողով։

Պետրոս Զաքարեան

Վ. ՏՕՏՕՄԵԱՆՑԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

—

Դեկտեմբերի 29-ին, Մոսկվայի Հայոց Ժողովարանում տեղի ունեցաւ յայտնի կօսպերատիստ Վ. Տօտօմեանցի դասախօսութիւնը՝ «Կովկասն և այն միջոցները, որոնցով պիտի բարւոքել նրա բնակչութեան կացութիւնը» թեմայով։

Դասախօսը հերքելով այն համատարած մոլորութիւնը, թէ Կովկասը վաճառականական երկիր է, ցոյց տուաւ, որ ըստ ստատիստիկայի նրա բնակչութեան 75%-ը պարապում է գիւղատնտեսութեամբ—երկրագործութեամբ, գինեգործութեամբ, մեղուաբուծութեամբ, շերամապահութեամբ և այլն։ Դժբաղդաբար մի երկիր, որ Ռուսաստանի ամենահարուստ մասն է կազմում՝ այժմ, ամենասկան կրիզիսի մէջ է և դիմում է արագ դէպի քայքայում. իբր ակներև ապացոյց տուեց այն փաստը, թէ մինչև 1884 թ. Կովկասից արտահանվում էր 810 միլիոն պուդ ցորեն, 1906 թ. ընդհակառակը ներմուծվում է 10 միլիոն պուդ ցորեն։

Սրա պատճառները հարկաւ պիտի փնտռել նախ ժողովրդի տգիտութեան մէջ, ապա այն եղբայրասպան կռիւների, որ տեղի ունեցաւ վերջին տարիները և ապատգրաման անցողակի շրջանի մէջ. սակայն սըրանք չեն միայն պատճառները, նրանք աւելի խորն են—տգիտութեան հետ միասին գիւղատնտեսական գործիքների հին նախնական ձևը, ապա մշակման անկանոն սիստեմը—այսպէս կոչված եռդաշտեան, որի շնորհիւ այժմ խրոնիկական սովը, տնտեսական անձուկ դրութիւնը՝ մինչև կովկասցու անբաժան ընկերներն են։ Սովորաբար պատճառների մէջ հաշուում են նաև սակաւահողութիւնը—սակայն 2½ դես., որ ընկնում է իւրաքանչիւր անձի Կովկասում քիչ չը պիտի համարել. ընդհակառակն արտասահմանում այդչափ հող ունեցող գիւղացին միշտ կուշտ է և բարեկեցիկ դրութեան մէջ է գտնվում. պատճառը մշակման սիստեմի մէջ պիտի փնտռել, որովհետև արտասահմանում գիւղական համայնքները հողը հանգստացնում են ոչ թէ ոչինչ չը ցանելով, այլ զանազան բանջարեղէններ, օրինակ մէկ տեղ ցորեն, մի այլ տեղ գետնախնձոր, իսկ մի երրորդ տեղ լոբի. միւս տարին հակառակը—գետնախնձորի տեղում ցորեն, ցորենի տեղում լոբի, իսկ միւսում գետնախնձոր և այլն, և այսպիսով հողը, թէ պարապ չէ մնում խպառ և թէ միւս բանջարներից ստանալով իրան պարարացնող հիւթը՝ պատրաստվում է հետևեալ տարին ցորեն արտադրելու։

Եթէ մեր գիւղացին ևս փոխէ իր երկրագործական գործիքները, ցանելու ձևը՝ նրա դրութիւնը ևս տանելի կը դառնայ։ Հարկաւ հարց կը տան, ինչ միջոցներով հայթայթել գործիքները և դասախօսը խօսեց կօսպերատիվ հասատատութիւնների այն բարւոքիչ դերի մասին, որ կատարում են նրանք արտասահմանում և Ռուսաստանի մի քանի մասերում։ Սպառողական, վարկային և խնայողական-փոխատու ընկերութիւններն են, որ պիտի բարձրացնեն գեղջուկի տընտեսականը, որոնք կը հայթայթեն ժողովրդին, գլխաւորապէս գիւղական մասին, արժան պարեն և թէ դրամական օժանդակութիւն գիւղատնտեսական գործիքներ գնելու։ Այդ ընկերութիւններն, որտեղ իւրաքանչիւր անհատ մասնակցում է մի չընչին գումարով—վերջի վերջոյ թէ օգնութեան է հասնում գիւղացուն և թէ ազատում նրան վաշխառուների ամենակեր ճիրաններից և թէ տարեկան որոշ եկամուտով օժանդակում գիւղական հասարակական հիմնարկութիւններին—դպրոցին, հիւանդանոցին, ջուլհականոցին և այլն։

Անդրկովկասում դժբաղդաբար կօսպերացիան ամենևին համեմատ չէ տարածված. ընդհակառակը Հիւսիսային Կովկասի Կուբանան շրջանում 7 տարվայ ընթացքում այնպիսի լայն գործառնութիւն է ստացել, որ մարդ միայն նախանձել կարող է՝ կօսկիների գիւղերում մօտ 150 վարկային ու խնայողական ընկերութիւններ կան, 1910 թուին եկատերինօդարում տեղի ունեցած ժողովում, ուր 300 գիւղական ներկայացուցիչներ են եղել, որոշուն են կայացրել խնդրելու սեմինարիաներում, ըէալական դպրոցներում և գիմնազիաներում մտցնել կօսպերացիայի կուրսեր. ապա յատկացրել են իրանց տարեկան արդիւնքի 10%-ը շրջիկին խստրուկտորների, որոնք գիւղերում պէտք է ցոյց տան գիւղատնտեսական նոր տեսակի գործիքներ և բացատրեն նրանց առաւելութիւնը։ Կուբանեան շրջանն ամենառաջին տեղն է բռնում համարեա ողջ Ռուսաստանում. երկրորդ տեղը բռնում է Թերեքեան շրջանը, ուր գինեգործները միացել են ու կօսպերատիվ ընկերութիւն կազմել, յետոյ Ռութայիսի նահանգը, որտեղ 15 վարկային և 7 խնայողական ընկերութիւններ կան, ապա Երևանը, Բագուի նահանգը՝ շնորհիւ կուլտուրական Միութեան ջանքերի։

Կօսպերատիվ ընկերութիւնների շնորհիւ կարելի է զարգացնել շերամապահութիւնը, մեղուաբուծութիւնը, որն այժմ այնչափ յետ է ընկած, որ Կովկասը միայն 1½ միլիոն ռուբլու մեղր է արտահանում և 300 հազար ռուբլու մեղրամում, Ռուսաստանը մեղրամոմը ստիպված է արտասահմանից ստանալ, մինչդեռ եթէ մեղուաբուծութիւնը զարգանար, եթէ վարկային ընկերութիւններ լինէին, որոնք ձեռք մեկնէին գիւղացուն, նա կը բարւոքեր մշկման եղանակը և Ռուսաստանն ինքը կարտահաներ մեղր ու մեղրամոմ, վերջապէս գինեգործութիւնը, որ համարեա անկման մէջ է։ Կովկասի համեղ, հոտաւէտ գինիները հասնում են քաղաքներն արդէն կեղծված ու փչացրած. գիւղացու և սպառողի մէջ եղած միջնորդները շահագործում են նրա ծանր կացութիւնը և արժան ձեռք բերելով անապակ գինին, մատնում են նրան կեղծման ու ապականացման։ Նոյն դրութիւնն է եղել նաև Ֆրանսիայի հարաւում, սակայն այժմ այնտեղ արդէն կազմվել է ընդհանուր կօնֆեդերացիա 20 հազար անդամով, որն ունի իր սեփական խանութները և առանց միջնորդի, հետևապէս առանց կեղծելու, վաճառում է անապակ գինի և սպառողի համար ոչ թանգ ու մաքուր և գիւղացու համար աւելի բարձր գնով ու ձեռնտու։ Վերջերս բացի գինուց, խաղողից ծորում են այսպէս կոչված «խաղողի հիւթ» (виноградный сокъ), որից հանված է ալկոհոլը և բուժիչ նշանակութիւն ունի, այս բանը վաղուց ընդունված էր Ֆրանսիայում, իսկ այժմ պատրաստում են Անապայի մօտ։ Վերջապէս կօնսերվներ պատրաստելը, պղտավաճառը, պըտուղներ չորացնելը, խաղողից մարմելադ պատրաստելը և այլն ամենևին համայնական ջանքերով տեղի չէ ունենում մեր երկրում. ժողովուրդն ոչ մի ուշադրութիւն չը դարձնում, մինչդեռ եթէ միանան և կօսպերատիվ ընկերութիւններ կազմեն՝ առանձին գործ կարող են անել և մրգերն իզուր չեն կորչի կամ համարեա ձրի չեն վաճառվի։ Մեր երկիրը հարուստ է, բայց այդ հարստութիւնից ոչ ոք չի օգտվում և նա իզուր փչանում է ու վատնվում։

Զարմանալի է, որ կօսպերացիան, որը խորթ չէ Կովկասին ու Երևանի կողմերը եղել են այդպիսի պանիր պատրաստող միութիւններ, որոնց մէջ խոշոր դեր է կատարել հայ կինը՝ չէ տարածվում այնտեղ։ Մինչդեռ իւրաքանչիւր քաղաքացի, որպէս սպառող և թէ ինքը գիւղացին՝ պիտի մասնակցի, որ սպառողական ընկերութիւնները միակ միջոցն են, որոնք պէտք է թէ տընտեսապէս և թէ ֆիզիքապէս բարձրացնեն մարդկութեան։ Չէ որ կեղծիքը ներկայումս համաճառակի բնոյթ է ընդունել՝ կեղծվում է ամեն ինչ և մեզնից իւրաքանչիւրն, թէ հարուստ և թէ մանաւանդ չքաւոր իր օրգանիզմի մէջ ընդունում է ամենայն օր թոյն, որը թէև չնչին է քանակութեամբ, բայց հետզհետէ ի մի գումարվելով թունաւորում է մարդկային օրգանիզմը և տալիս այժմեան հիւծված, ուժասպառ և ֆիզիքապէս քայքայված մարդկութիւնը։ Իբրև սիրուն օրինակ, առաջ բերեց ֆինլանդական մի պատմուածք, որ շատ ընտրող էր ճանճերի գանգատ էր այն. ինչպէս մի ամբողջ ընտանիք ճանճերի ոչնչանում է այժմեան թունաւորված մթերքներից։ Ճանճի մէկը նստում է հացի վրա, որի մէջ մի քիչ գիժ հաց է խառնված եղել և ճանճը, որպէս թոյլ արարած, խսկոյն թունաւորվում, սակաւում է. երկրորդը նստում է դաշնքի վրա ու դարբոլորովին չէզոք անձնաւորութիւն, թոյլ եմ տալիս ինձ իմ բացատրութիւնը տալ, հիմնվելով ստացած տպաւորութիւնների վրա։

Արդ, իմ տպաւորութիւնը հետևեալն է։

Էջմիածնի միաբանութեան մէջ ներս է մուծել կուսակցական ոգին։

Այդ ցաւալի իրողութիւնը, որ մենք գիտէինք առաջ էլ, շատ որոշ կերպով պարզայայտվեց մեզ համար։

Երկու (կամ գուցէ մի քանի) կուսակցութիւնների բաժանված հոգևորականները անհաշտ բանակներ են կազմում, իրանց զեկավար ունենալով ազդեցիկ միաբաններ։

Ես ցանկացայ թափանցել այս անջատման իսկական բնոյթը, ցաւակցաբար չը կարողացայ որոշ եզրակացութեան գալ այդ մասին։ Սակայն պատգամաւորների շրջանում խօսում էին այդ մասին և շատերի կարծիքն էր, որ կուսակցութիւնները դրսից են թափանցել վանքը...

Այնուամենայնիւ մենք անկարող ենք էջմիածնում տիրող կուսակցական բաժանումները դրսի կուսակցութիւնների արգասիք համարել։ Այս տեղեր են խաղում շատ ուրիշ նպաստաւոր պայմաններ, որոնք ընդունակ են երկպառակութիւն գցել միաբանների մէջ։ Վանական կեանքը իր հոգեբանութիւնն ունի և այդ հանգամանքը աչքից չը պէտք է թողնել։

Մի խումբ անձնաւորութիւններ մի յարկի տակ ժողովված, որոնց շահերը հակասում են միմեանց, ուրիշ շատ բաներ ուշնեն բաժանելու։ Եւ շահերի ընդհարումներից անշուշտ պիտի ծագէին կուսակցութիւններ։

Մարդկայիր կրքերը վանքի մէջ ևս խիստ են գործունէութեան։ Որքան էլ սանձված լինէին, գաղափարական յարձակվածներ կամ վերև յիշած կրօնական մոլիներ, որոնցից հայ ազգը ոչինչ շահ չունի։

Եթէ էջմիածինը լինէր սոսկ մի մենաստան, կարված ազգային-ընդհանրութեան շահերից, այսինքն կրօնամոլների առանձնութիւն որոնող մոլիների ապաստարան, այն ժամանակ ազգը անտարբեր կը լինէր դէպի այդ վանքի հոգևորականութեան ներքին կենցաղը, դէպի նրանց անհատական համոզմունքները և զգացմունքները։ Բայց էջմիածինը մի ապաստարան չէ. այնտեղ նստած է համայն ազգի ընտրեալը, որի ձեռքումն է Լուսաւորչի եկեղեցու դիկը և ազգային լուսաւորութեան բարձրագոյն աստիանը, նաև եկեղեցական-կրթական սեփականութիւնների վարչական կենտրոնը։ Այդպիսի մի վանքի մէջ միաբանութիւնը դառնում է անմիջական օգնական Վեհին, նրա ծրագիրները իրագործող մարմինը։ Հայութեան համար մի սրբավայր չէ միայն, այլ ազգի կրօնական և բարոյական-կրթական պահանջների մի բովարան։ Իսկ միաբանութիւնը այն մարմինն է, որին Վեհափառը յանձնարարում է այդ պահանջներին բաւարարութիւն տալու պատասխանատուութիւնը իր գերագոյն զեկավարութեան ներքոյ։

Այսպիսով էջմիածնի վանականը հանդիսանում է իրաւաբանօրէն իրև պաշտօնեայ, որոշ պարտականութիւններով և իրաւունքներով։

Հետևապէս էջմիածնի վարդապետները պիտի աշխարհի գործունեայ կեանք վարող մարդիկ լինեն։ Իբրև այդպիսիներ այժմեան միաբանները ունեն դրական և բացասական յատկութիւններ։

Իբրև ոչ կուսակցական մարդ, իբրև մի լաւագոյն դրանք գերմարդիկ պիտի լինէին, գաղափարական յարձակվածներ կամ վերև յիշած կրօնական մոլիներ, որոնցից հայ ազգը ոչինչ շահ չունի։

Եթէ էջմիածինը լինէր սոսկ մի մենաստան, կարված ազգային-ընդհանրութեան շահերից, այսինքն կրօնամոլների առանձնութիւն որոնող մոլիների ապաստարան, այն ժամանակ ազգը անտարբեր կը լինէր դէպի այդ վանքի հոգևորականութեան ներքին կենցաղը, դէպի նրանց անհատական համոզմունքները և զգացմունքները։ Բայց էջմիածինը մի ապաստարան չէ. այնտեղ նստած է համայն ազգի ընտրեալը, որի ձեռքումն է Լուսաւորչի եկեղեցու դիկը և ազգային լուսաւորութեան բարձրագոյն աստիանը, նաև եկեղեցական-կրթական սեփականութիւնների վարչական կենտրոնը։ Այդպիսի մի վանքի մէջ միաբանութիւնը դառնում է անմիջական օգնական Վեհին, նրա ծրագիրները իրագործող մարմինը։ Հայութեան համար մի սրբավայր չէ միայն, այլ ազգի կրօնական և բարոյական-կրթական պահանջների մի բովարան։ Իսկ միաբանութիւնը այն մարմինն է, որին Վեհափառը յանձնարարում է այդ պահանջներին բաւարարութիւն տալու պատասխանատուութիւնը իր գերագոյն զեկավարութեան ներքոյ։

Այսպիսով էջմիածնի վանականը հանդիսանում է իրաւաբանօրէն իրև պաշտօնեայ, որոշ պարտականութիւններով և իրաւունքներով։

Հետևապէս էջմիածնի վարդապետները պիտի աշխարհի գործունեայ կեանք վարող մարդիկ լինեն։ Իբրև այդպիսիներ այժմեան միաբանները ունեն դրական և բացասական յատկութիւններ։

Իբրև ոչ կուսակցական մարդ, իբրև մի բոլորովին չէզոք անձնաւորութիւն, թոյլ եմ տալիս ինձ իմ բացատրութիւնը տալ, հիմնվելով ստացած տպաւորութիւնների վրա։

Արդ, իմ տպաւորութիւնը հետևեալն է։

Էջմիածնի միաբանութեան մէջ ներս է մուծել կուսակցական ոգին։

Այդ ցաւալի իրողութիւնը, որ մենք գիտէինք առաջ էլ, շատ որոշ կերպով պարզայայտվեց մեզ համար։

Երկու (կամ գուցէ մի քանի) կուսակցութիւնների բաժանված հոգևորականները անհաշտ բանակներ են կազմում, իրանց զեկավար ունենալով ազդեցիկ միաբաններ։

Ես ցանկացայ թափանցել այս անջատման իսկական բնոյթը, ցաւակցաբար չը կարողացայ որոշ եզրակացութեան գալ այդ մասին։ Սակայն պատգամաւորների շրջանում խօսում էին այդ մասին և շատերի կարծիքն էր, որ կուսակցութիւնները դրսից են թափանցել վանքը...

Այնուամենայնիւ մենք անկարող ենք էջմիածնում տիրող կուսակցական բաժանումները դրսի կուսակցութիւնների արգասիք համարել։ Այս տեղեր են խաղում շատ ուրիշ նպաստաւոր պայմաններ, որոնք ընդունակ են երկպառակութիւն գցել միաբանների մէջ։ Վանական կեանքը իր հոգեբանութիւնն ունի և այդ հանգամանքը աչքից չը պէտք է թողնել։

Մի խումբ անձնաւորութիւններ մի յարկի տակ ժողովված, որոնց շահերը հակասում են միմեանց, ուրիշ շատ բաներ ուշնեն բաժանելու։ Եւ շահերի ընդհարումներից անշուշտ պիտի ծագէին կուսակցութիւններ։

Մարդկայիր կրքերը վանքի մէջ ևս խիստ են գործունէութեան։ Որքան էլ սանձված

ձեալ սատկում. երբորդը իւղի և այդպէս բոլոր ճանճերը ոչնչանում են. մայրը յուսահատութիւնից որոշում է զաւակների կորստից յետոյ անձնասպանութեամբ իրան վերջացնել ու նստում է ճանճեր թունաւորող թղթի վրա՝ ծծում է ամենայն ոյժով թոյնը, սակայն նա չէ ներգործում, որովհետև նա ևս կեղծված էր։ Այսպիսով այնտեղ, ուր պիտի թոյն լինէր՝ նա չը կայ. իսկ որտեղ չը պիտի լինէր՝ այնտեղ կայ։

Կովկասում, ըստ յարգելի դասախօսի, չէ տարածվում կօպերացիան, որովհետև ինտելիգենտ ոյժեր չը կան գիւղերում հայ ինտելիգենտը ձգտում է դէպի քաղաքները. նա այնտեղի 30 ր. պաշտօնը գերադասում է գիւղական թագաւորութիւնից, նրա համար քաղաքի ստրկութիւնը բարձր է գիւղի ազատութիւնից ու ստեղծագործութիւնից։ Մեր այժմեան ինտելիգենտները վազում են քաղաքները, որպէս թիթեռնիկները դէպի ճրագի լոյսը և այնտեղ գտնում իրանց անժամանակ քայքայումն ու կորուստ։ Այո, դժբաղդաբար գիւղում ոյժեր չը կան, իսկ նրանք որոնք նում են, սառն անտարբերութեան, ծաղրի, անարգանքի ու հալածանքի են ենթարկում։ Այսպէս թէ այնպէս գիւղն առանց գլխի է, առանց ուղեղի նա քայքայվում է, մինչդեռ նրա քայքայումը պիտի բերէ նաև կորուստ քաղաքին։ Տօտօմեան առաջ բերեց այն չնչական ասացուածքը, որտեղ գիւղային նմանեցրած է ծառի արմատներին, իսկ վաճառականութիւնն ու առևտուրը ծառի ճիւղերին, թէ փթեց ու չորացաւ արմատը, ապա կորչելու են նաև ճիւղերը։

Գիւղից ենք եկել ամենքս և եթէ անկարող ենք անձամբ օգնել գիւղին, գոնէ հոմզենք ուրիշներին չը հեռանալ այնտեղից։

Դանիէլը, որ կիսով չափ լեզն էր, ծափահարութեամբ ողջունեց դասախօսին։ Մօսկվայի հայ գաղութը փայլում էր իր փառաւոր բացակայութեամբ։ Անցեալ անգամ Մ. Նալբանդեանի դասախօսութեանը նա չէր բարեհաճել, թէև ի նպատի առնելով, որ դասախօսն ուսանող էր և ոչ հեղինակաւոր անձն. թէև սխալ, բայց գրձեալ մի քիչ արդարացուցիչ հանգամանք։ Սակայն չը գալ նաև Տօտօմեանցի դասախօսութեանը, որ եթէ հրապարակով յայտարարած լինէր դասախօսութեան մասին, երևի ռուս հասարակութիւնը կը լցնէր դահլիճը՝ պիտի խոստովանել, որ դատապարտելի է։

Առանց հայրենիքի մենք այն անարմատ ծառին ենք նման, որի վերջն է անխուսափելի կորուստն ու ոչնչացումը։

Առ-Ջէն

Մօսկվա, 1 յունվար

ՏԱՇԿԵՆՏԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Դպրոցը

Ճանապարհորդութեանս ընթացքում մի քանի օր մնացի Տաշկենտում և, իբրև հայ մարդ, բնականաբար հետաքրքրվեցի տեղական հայերի և նրանց կուլտուրական մասին։ Եւ ահա լսածս-տեսածս գալիս եմ հաղորդելու «Մշակի» ընթերցողներին։

Տաշկենտի հայ գաղութը վաղուց չէ ինչ կազմվել է, գլխաւորապէս հայ-թուրքական զէպքերից յետոյ է սկսել բազմանալ։ Այսօր քաղաքիս հայերի թիւը հասնում է մինչև 5—600-ի, հաշված և երեխաները։

Հայերը տնտեսականապէս նախանձելի դրութիւն չունեն, չը հաշած մի քանի բացառութիւններ։ Նրանք գլխաւորապէս արհեստաւորներ են կամ մանր առուտրով զբաղողներ։

Իբրև հասարակութիւն, իրանց սկիզբն են դրել 1907 թ. վերջերին, երբ հրաւիրել են քահանայ և սկիզբ դրել աղօթատուն։ 1908 թ. աշնանը բացել են դպրոց, որը երկու տարի մի կերպ ապրելուց յետոյ այժմ արդէն փակ է, որովհետև ուսուցչի տուած արդիւնքն եղել է այն, որ 1) ժողովուրդը խրտնել է դպրոցից, որի հետևանքով տարվայ սկզբում եղած 30 աշակերտուհիներից տարվայ վերջը եղել են միայն 14 հոգի, 2) ինտրիգներ են արվել հոգաբարձութեան և քահանայի միջև հէնց առաջին տարում և որը մինչև օրս շարունակվում է հոգաբարձութեան կողմից. մերժել են քահանայի առաջարկած ձրի ծառայութիւնը՝ կրօնի դասերն ասանդելու, որը ծխ. ժողովը շնորհակալութեամբ էր ընդունել, իսկ հոգաբարձական խառն ժողովը չէ ընդունել, առարկելով թէ՝ «կղերը մեր դպրոցներից դուրս պիտի լինի»։

Ներկայումս դպրոցը փակ է, որովհետև հոգաբարձութիւնը չունի միջոցներ։ Թէև տեղական քահանան, հ. Տէր-Մկրտչեանց, դեռ ևս ներկայ դպրոցական տարվայ սկզբին իր պատրաստակամութիւնն էր յայտնել ձրի դասաւանդելու հայոց լեզուի և կրօնի դասերը և միայն խնդրում էր 300 ր. տալ, որպէսզի դրան աւելացնելով թոշակներից, տօնածառից և «Աւետիս շրջելուց» գալիքը մօտաւորապէս 2—300 ր., կարողանայ հոգալ մի վարժուհու և մի ծառայի ռոճիկներն ու մանր ծախքերը, սակայն այդ էլ զլացան նրան տալու։

Քահանային այցելելով՝ հարց տուի թէ ինչու նա չէ դիմում ժողովրդից ոմանց և հոգաբարձութիւնից անկախ գործում դպրոցի վերաբերմամբ։ Տէր-Հայրը պատասխանեց.—«Այդ դէպքում կը նսեմանայ հոգաբարձութեան նշանակութիւնը և վարկը կընկնի, այն ինչ հոգաբարձութեան վարկի ժողովրդեան աչքում բարձր մնալն է օգուտ հասարակական շահերին. չէ որ միշտ էլ նոյն կազմը չէ մնալու, կը գան ուրիշներն իրանց ծառայութիւնն անելու։ Դրա համար էլ հարկաւոր է և ցանկալի, որ հոգաբարձութիւնն ինքը պահպանէր դպրոցի գոյութեան շարունակութիւնը, օգտվելով իմ ձրի ծառայութիւնից»։

Ի դէպ պէտք է ասել, որ տեղիս քահանան, որպէս երևում է, եռանդուն աշխատանք է գործ դնում կրթական գործի վերաբերմամբ։ Օրինակ նա ձրիաբար դասաւանդում է կրօն և հայոց լեզուն տեղիս առևտրական դպրոցում, շաբաթական 14—16 դաս, և այս երկրորդ տարին է։ Նա աւանդում է Кадетскій корпусъ-ում նոյնպէս հայերէն և կրօն, ուր մի աշակերտ միայն կայ։

Տէր-հօրն առաջարկված է շաբաթական մէկ դաս, 2 ր. վարձատրութիւն, սակայն նա աւանդում է շաբաթական 2 դաս, երկրորդ դասն ի հարկէ ձրի։

Միւս պետ. դպրոցներում—գիմնազիաներ, ռեալական և արհեստագիտ. դպրոց—ևս կրօնը և հայոց լեզուն դասաւանդելու համար գրաւոր թէ բանաւոր գիմումներ սկսել է և գործն առաջ է տարել երկրի դպրոցական գլխաւոր տեսչի մօտ. և այդ համարեա եկած տարվանից՝ 1908 թ. յունվարից, սակայն ցաւ ի սիրտ ասած մնացել է անհետևանք՝ վիւորական նահանգապետը տեսչին չը պատասխանելու պատճառով։ Աւելի քան մի տարի է՝ ինչ քահանան դադարել է իր միջնորդութիւնը շարունակելու, որովհետև թեմի առաջնորդը այդպէս է պատուիրել, քանի որ ինքը ամբողջ թեմի համար միջնորդութիւն պիտի յարուցանէր լուսաւորութեան մինիստրութեան մօտ։

Նոյնիսկ տեղական հայ դպրոցի բացումը գուցէ տեղի չունենար ժամանակին, եթէ չը լինէր տէր-հօր ակտիվ մասնակցութիւնը։ Որպէս ինձ պատմեցին Կօկանդամ, դպրոցի բացման դէմ են եղել հոգաբարձութեան մեծամասնութիւնը, բացառութեամբ Մելիքեանցի, Մելիք-Ղարագեօզեանցի և Ա. Յակոբեանցի, վերջինս անձնափոխանորդ։ Եւ տէր-հայրը պաշտօնական թուղթ գրելով յանուն հոգաբարձութեան, ինքն անձամբ տարել է և անդամներին առանձին առանձին, իրանց խանութներում կամ գործատեղում ստորագրել տալով համաձայնութիւններն առել դպրոցը բանալու։ Եւ այդպիսով է դպրոցն բացվել և շարունակել իր գոյութիւնը մինչև 1909 թ. մայիսը։

Յովհ. Վարդապետեան

ԳՐԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Սառը հոգիները միայն յիշում են, քնքոյշ հոգիները պահում են յիշողութիւններ, և անցեալը նրանց համար չէ մեռնում, այլ միայն բացակայում է»։

(Լ. Ն. Տօլստոյի յուշատետրից)

Մեծ գրողի և ուսուցչի մահը ցնցեց ռուս ժողովրդին։ Ժողովրդական այդ վշտի միջով անցնում է այն քնքոյշ սէրը, որ յիշատակելի է, որ կամենում է «յիշողութիւն պահել» մեզանից հեռացած թանգագին մարդու մասին։

Մեր ընկերութեան ընդհանուր ժողովը դեկտ. 12-ին վճռեց մեծ եռանդով շարունակել աշխատել իր հիմնական նպատակի համար՝ հիմնել Թանգարան-Տուն Լ. Ն. Տօլստոյի անունով։ Այս խնդիրը ամբողջութեամբ ընկերութեանը ներկայանում է հետևեալ ձևով. յատուկ գեղարուեստական շինութիւն, իբրև յուշարձան Տօլստոյին, և նրա մէջ՝ թանգարան, գրադարան Տօլստոյի և նրա մասին եղած գրուածքներից, դահլիճներ և ժողովրդական սրահներ ժողովների և գրականական հարցերի ընթերցանութիւնների համար և մի շարք զրական-հասարակական ընաւորութեան հաստատութիւններ։ Այդ նպատակին հասնելու համար, ի հարկէ, հարկաւոր է նպատակ առնել լայն հասարակական շրջանների համակրութեան ու աջակցութեան ստիճանը։

1911 թ. յունվար ամսին ընկերութիւնը ձեռնարկում է թանգարանի հաստատման ժամանակաւոր շինութեան մէջ (Պետերբուրգ, Նեվսկի պր. 102) և շուտով այդ թանգարանը կը բացվի հասարակութեան համար։ Համարեա միևնոյն ժամանակում լոյս կը տեսնէ ընկերութեան ժողովածուներից առաջինը։

«Լ. Ն. Տօլստոյի նամականին» անուան տակ, նաև ընկերութեան «Տեղեկատուի» № 1-ինը։

Ծառայելով իր հիմնական նպատակին՝ այն է Տօլստոյի Թանգարան-Տուն հիմնելուն, ընկերութիւնը ընդամէն եռանդով պաշտպանում է և պրօպագանդա է մղելու իր ոյժերի չափով Եասնայա Պոլեանան ալգաչին սեփականութիւն դնելու միտքը, որպէսզի նրա մէջ յաւիտեան յաւիտենից պահվի Լեվ Տօլստոյի դերեզմանը և այն կացութիւնը, որի մէջ անցաւ նրա կեանքը։

Տօլստոեան Թանգարանի ընկերութիւնը յոյս ունի, որ այն խոշոր հետաքրքրութիւնը և սիրալիր ուշադրութիւնը, որով ռուս ժողովուրդը վերաբերվում է դէպի մեր գրողի յիշատակը, կօգնի մեզ իրագործել մեր ընդգծած նպատակը իր ամբողջութեամբ։

Այն անձինք և հաստատութիւնները, որոնք համակրում են մեր նպատակին և ցանկանում են օգնութեան գալ մեզ, թող բարեհաճեն ուղղել նուէրները՝ 1) գրամով՝ ընկերութեան գանձապահ Սիմէօն Աֆանասիէվիչ Վենգէրովի անուան (С.-Петербургъ, Загородный пр. д. 21 кв. 36) և 2) առարկաներով թանգարանի համար (պատկերներ, նկարներ, բիւստեր, գրքեր, ձեռագրեր, նամակներ և այլն) ընկերութեան խորհրդի փոխ-նախագահ Միխայիլ Ալեքսանդրովիչ Ստախովիչի հասցէով. (Спб. Мойка, д. 91).

Առանց յատուկ նպատակի ուղարկվող գրամները կը համարվեն նուիրատուութիւններ Տօլստոեան Թանգարանի Տան հիմնադրութեան համար։

Ի նկատի ունենալով զանազան անձանց և խմբակների կողմից ուղղվող յաճախակի հարցասխնդումները, ընկերութիւնը վճռել է ընդունել պահելու համար նուէրներ նաև ուրիշ յատուկ նպատակների համար, որոնք շահկապված են Լ. Ն. Տօլստոյի անուան հետ, մինչև միևնոյն նպատակներին ծառայող կազմակերպութիւնների երևան գալը։

Խնդրում ենք ընկերութեան նպատակներին համակրող հրատարակութիւնների խմբագրութիւններին տպագրել այս դիմումը։

Խորհրդի նախագահ՝ Մաքսիմ Կովալէվսկի
Փոխ-նախագահներ՝
Վլ. Կորոլենկո, Միխ. Ստախովիչ
Գանձապահ՝ Ս. Վենգէրով
Քարտուղար՝ Վլ. Մուրինով

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Սեմիրեչիի շրջանի սոսկալի երկրաշարժի զոհերի կարիքը շատ մեծ է։ Դրութիւնը յիշեցնում է Ախալքալաքի երկրաշարժի վատթար վիճակը։ Թշուառներին օգնութիւն հասնելու նպատակով ամենուրեք կատարվում է հանգանակութիւն։ Ինչպէս յայտնի է, Թիֆլիսում հանգանակութեան գործը յանձն է առել յատուկ մասնաժողով, որ գործում է կոմսուհի Ելիզավետա Անդրէեվնա Վորոնցովա-Դաշկովայի նախագահութեամբ։ Օրերս յիշեալ մասնաժողովը հրատարակեց մի կոչ, որով խնդրում է արձագանք տալ ազէտեալների դատն վիճակին և նուէրներով ամոքել նրանց։ Նուիրատուութիւնները կարելի է ուղղել կոմսուհու անունով։

◆ Երէկ, յունվարի 11-ին, ներքին գործերի մինիստրութեան պաշտօնեայ իսկական պետական խորհրդական Պետրովը, ուղեկցութեամբ Եփրեմ եպիսկոպոսի այցելեց Ներսիսեան, Յովհաննեան միջնակարգ դպրոցները և Նորաշէնի ծխական դպրոցը և ներկայ եղաւ ռուսաց լեզուի և պատմութեան դասերին։

◆ Մօսկվա.—Եղբայր Ժամարեանցներին «Գիւղատնտես» խմբագրական կազմը ուզարկել է հետևեալ հեռագիրը. «Լի խորը շնորհակալութեան զգացմունքով այն առատ նուիրաբերութեան համար, որ արել էք դուք գիւղատնտեսական կրթութեան և մեր երկրի տնտեսական բարձրացման գործի վրա, յայտնում ենք նաև մեր սիրայօժար պատրաստակամութիւնը նուիրելու մեր ոյժերն ու գիտութիւնը այդ գործի լաւագոյն կազմակերպութեանը»։

◆ Թիֆլիսի ուղղափառ հոգևորականութիւնը պատրաստվում է մեծ պատուով հանդիսաւոր դնել Գրիգորի եպիսկոպոսին։ Արդէն սկսված է հանգանակութիւն այդ նպատակով։

◆ Փետրվարի 12-ին, Արտիստական ընկերութեան դահլիճներում տեղի կունենայ պարահանդէս յօգուտ մահմեդական բարեգործական ընկերութեան։

◆ Եղջիւրաւոր անասունների մէջ համակցութեան։

Հանդուցեալ Մատթէոս II-ի այս բացառիկ գանձը մեր աչքին մի ապացոյց է թւում, որ նա ցանկացել է ազատ մնալ կուսակցական ճնշումներից և չեզոքութիւն պահպանել։

Որքան աղողվել է նրան այս դիրքը պահպանել, և եթէ պահպանել է, ինչ զոհերի շնորհիւ, այդ մենք չը գիտենք։ Գիտենք միայն, որ նա կարող էր շփոթվել, տատանվել իրեն գործակիցներ ընտրելու գործում և հաւանական է նաև, որ սխալներ էլ գործած լինէր, ինչպէս պնդել են ինձ վանականները։ Մեր կաթողիկոսը անսխալական չէ պապի նման, ինչպէս նկատեց Բենիկ վարդապետը իր ճառի մէջ։ Մենք աւելին կասենք. Էջմիածնում տիրող հանգամանքները Հռոմի պապին էլ սխալական կը դարձնէին։

Հարց է ծագում, թէ արդեօք հայ ազգը կարող է կաթողիկոս ընտրել Էջմիածնի միաբանութեան միջից։

Աւանդաբար մեր կաթողիկոսների մեծագոյն մասը եկել է Թիւրքիայից։ Մենք, ռուսահայերս, միշտ գերադասել ենք Թիւրքիայի եպիսկոպոսներին։ Այսօր իսկ շատերի աչքերը յառած են դէպի Կ. Պոլիս։

Մեզ թւում է թէ ռուսահայերի այս հոգեբանութիւնը այն հիմքն ունի, որ կաթողիկոսի կոչման հետ կապված է մի ինչ-որ վեհութիւն և խորհրդականութիւն, որ մենք որոնում ենք բնականաբար մեզ անձամբ անծանօթ հոգևորականների մէջ։ Իսկ մեր եպիսկոպոսներին մենք ճանաչում ենք, գիտենք նրանց թուլութիւնները և պակասութիւնները, նրանք մեր ընկերներն են, մեզ հետ ուսել են, մեզ հետ ապրել։ Մի խօսքով նրանց անձնաւորութիւնը և գործերը չեն բարձրացրել էր նրան հերոսի պատուանդանի վրա։

Էջմիածնում իրականութիւնը դժգոյն էր, առօրեայ հոգսերը չեն, որ փայլեցնում են հերոսի շուքը։

Էջմիածինը Իզմիրլեանի փառքի գերեզմանը պիտի դառնար, եթէ ուշնար նրա ֆիզիկական մահը։

Նա անարատ էր, բայց անարատութիւնը մի առաքինութիւն է միայն, իսկ առաքինութիւնը մաքուր մթնոլորտում է միայն զօրեղ զէնք։ Արդ Էջմիածնի մթնոլորտը պղտորված էր կրքերի զոլորշիներից։ Մատթէոս II-ի կամքը թէկուզ երկաթէ լինէր, նա պիտի փշրվէր կուսակցական կծու ընդհարումներից, պէտք է չեզոքանար տատանումների, անվճռականութեան առջև, որոնք հետևանք էին նրա «մենակութեան»։

Սառածներից ես իրաւունք եմ համարում ինձ եղրակացնելու, որ կուսակցական պայքարը Էջմիածնի մէջ դրսից չէ ներմուծել, այլ առաջ է եկած վանքի ներքին մրցումից։ Կուսակցութիւնները իրանց պաշտպան և նեցուկ պիտի որոնէին Կաթողիկոսին և հասարակութեանը։

Եւ իրաւ այդպէս էլ է։

Էջմիածնի երկու հակառակ բանակները յարել են դրսի երկու կուսակցական հոսանքներին և նրանց մէջ պաշտպանութիւն որոնել։

Պարզ է, որ Կաթողիկոսի վերաբերմամբ ևս այդ բանակները պիտի այս թէ այն դիրքը բռնէին, նայելով թէ Հայրապետը դէպի ինչ անձինք էր հաւատարմութիւն տածում։ Հասկանալի է նոյնպէս, որ ինքը Վեհափառը պէտք է ստիպված լինէր «մենակ եմ» կոչելու, եթէ չէր կամենում կըտրուկ քայլով մօտենալ մէկ կամ միւս կուսակցութեան։ Դրանում իրականութիւնը դժգոյն էր, առօրեայ հոգսերը չեն, որ փայլեցնում են հերոսի շուքը։

Էջմիածնում իրականութիւնը դժգոյն էր, առօրեայ հոգսերը չեն, որ փայլեցնում են հերոսի շուքը։

Էջմիածինը Իզմիրլեանի փառքի գերեզմանը պիտի դառնար, եթէ ուշնար նրա ֆիզիկական մահը։

Նա անարատ էր, բայց անարատութիւնը մի առաքինութիւն է միայն, իսկ առաքինութիւնը մաքուր մթնոլորտում է միայն զօրեղ զէնք։ Արդ Էջմիածնի մթնոլորտը պղտորված էր կրքերի զոլորշիներից։ Մատթէոս II-ի կամքը թէկուզ երկաթէ լինէր, նա պիտի փշրվէր կուսակցական կծու ընդհարումներից, պէտք է չեզոքանար տատանումների, անվճռականութեան առջև, որոնք հետևանք էին նրա «մենակութեան»։

Սառածներից ես իրաւունք եմ համարում ինձ եղրակացնելու, որ կուսակցական պայքարը Էջմիածնի մէջ դրսից չէ ներմուծել, այլ առաջ է եկած վանքի ներքին մրցումից։ Կուսակցութիւնները իրանց պաշտպան և նեցուկ պիտի որոնէին Կաթողիկոսին և հասարակութեանը։

Եւ իրաւ այդպէս էլ է։

Էջմիածնի երկու հակառակ բանակները յարել են դրսի երկու կուսակցական հոսանքներին և նրանց մէջ պաշտպանութիւն որոնել։

Պարզ է, որ Կաթողիկոսի վերաբերմամբ ևս այդ բանակները պիտի այս թէ այն դիրքը բռնէին, նայելով թէ Հայրապետը դէպի ինչ անձինք էր հաւատարմութիւն տածում։ Հասկանալի է նոյնպէս, որ ինքը Վեհափառը պէտք է ստիպված լինէր «մենակ եմ» կոչելու, եթէ չէր կամենում կըտրուկ քայլով մօտենալ մէկ կամ միւս կուսակցութեան։

Դրան

բեկապէս Ֆլամբոյին հանդիպելու տեսարանում. միւս տեսարաններում գունատ էր։

Միրզոյեան, Սրմէնեան, Մամիկոնեան, Ալլահվերդեան, Շահխաթունի, Լաքա ու Ջոզ էին։

Նոյնը կարելի է ասել կանանց դերերի մասին, որոնք նպաստում էին անամբողջին։

Սիր։

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

— Այսօր երգչուհի Վան-Բրանդը հանդէս կը գայ «M-le Բատերֆլէյ» օպերայի մէջ։

— Երգչուհի Վան-Բրանդը համաձայնել է երգել «Տրաւիատա» օպերայի մէջ Զուբալօվեան Ժողովրդական տանը։

— Առաջիկայ սեպտեմբեր ևս Թիֆլիսի Արտիստական թատրոնը վերցրել է ներկայացումների համար դարձեալ Նիկուլինը իր խմբով։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջմիածին, 31 դեկտեմբերի

«Մշակի» № 290-ում ունի մի թղթակցութիւն Ց. Ցակոբեան ստորագրութեամբ Քրլվար գիւղից։

Թղթակիցը գրում է, որ ճեմարանի վարչութիւնը Դ. դասարանի աշակերտ Արա Տէր Ցակոբեանին ուղարկել է հայրենիք, որտեղ նա վարձանվել է ամիսս 10-ին։ Թղթակից պարոնը այդքանով չը բաւականանալով, լրեն թոյլ է տուել փաստերը խեղաթիւրելով ծանր կերպով մեղադրել ճեմարանի վարչութիւնը «և առանց հօրը տեղեկացնելու, խեղճ տղային ուղարկում են մի բարակ ամարային բլուզ հագին չորս օրվայ ճանապարհ Էջմիածնից Դաղստանի սարերը»։

Իրողութիւնն այս է. անցեալ նոյեմբերի 11-ին ճեմարանի բժիշկը վարչութիւնը տուել է այսպիսի թուղթ № 16. «Տէր-Ցակոբեան Արան հիւանդ է շատ հին մալարիայով. նա անկարող է այստեղ շարունակել իր ուսումը, և անհարկի է այստեղ նրան բժշկելը, ուստի հարկաւոր է ուղարկել հայրենիք անորոշ ժամանակով մինչև առողջանալը»։

Բժշկի գրութեան վրա հիմնվելով ճեմարանի հայր տեսուչը մանկավարժական ժողովին դնելով տղային ժամանակաւորապէս ճեմարանից հեռացնելու խնդիրը և ստանալով ժողովի որոշումը, նոյեմբերի 26-ին ուղարկել է աշակերտին հայրենիք։ Հանգուցեալ աշակերտը ս. Գայեանէ վանքի վանահայր Գրիգորիս վարդապետի օրհնելոր թոռն է. հայր տեսուչը նախապէս հարցրեց թէ Գրիգորիս վարդապետին և թէ տեղեկացրեց Վաղարշապատ գիւղին կից Սամադար գիւղում ապրող նրա ազգականներին և սրանց հաւանութիւնն էլ ստանալով՝ տղային ճանապարհեց հայրենիք տալով նրան այս հանձարեղեղը. մահուդէ բլուզ և շալվար, սատին բլուզ և շալվար, երկու շապիկ, երկու վարտիկ, երկու թաշկինակ, մի երեսսրբիչ, մի զոտի, մի զոյգ կօշիկ և կրկնակօշիկ, երկու զոյգ գուլպայ, մի գլխարկ, մի բաձկոն (փուֆայկա) և մի վերարկու (ճեմարանը ամարային վերարկուներ չունի, տուածը ձմեռնային վերարկուն էր, որից հանում են ճեմարանի բոլոր աշակերտները)։ Արան ունէր և սեփական վերմակ, բարձ, ամարային սպիտակ տուժուրկա և Գրիգորիս վարդապետից ստացած մուշտակ։

Արա Տէր-Ցակոբեանին վարչութիւնը ճանապարհ դրեց նոյեմբերի 26-ին, ուրեմն և 29-ին կամ ամենաուշը 30-ին պէտք է մտնէր հայրենիքում։ Նրա դեկտեմբերի 9-ին տեղ հասնելը բացատրվում է նրանով, որ Բագուում մնացել է իր եղբօր մօտ, ինչպէս գնալիս յայտնեց վարչութեանը։

Մեզ մնում է ցաւ յայտնել տղայի անժամանակ վախճանվելու առիթով և մեր վերզովմունքը Ցակոբեանին, որ իրան թոյլ է տուել անտեղի զրպարտել ճեմարանի վարչութեան, որ երբէք չէ զլանում իր հոգատարութիւնը իր խնամքին յանձնված սաների համար։

Հնդ սմին ուղարկում ենք և բարձր. Գրիգորիս վարդապետի նամակը։

ճեմարանի վերակացուներ՝

Ց. Գրիգորեան Ց. Խաչատրեան

Պետերբուրգ, 28 դեկտեմբերի

Թոյլ տուէք ձեր թերթի միջոցով Պետերբուրգի բարձր գիւղատնտեսական կուրսերի հայ ուսանողութեան կողմից խորին շնորհակալութիւն յայտնել՝ «Գիւղատնտես» թերթի խմբագրութեան, Բժշկապետներ՝ Արտաշէս Բուդուղեանին՝ մի-մի օրինակ «Հօրիզոն», «Արօր», «Միտք» և «Պակ», Գասպարեանին՝ մի օրինակ «Մշակ» նուիրելու համար։

Մեր շնորհակալութիւնն ենք յայտնում նաև «Ժայռի» խմբագրութեան, որը չը նայած իր աւելի քան սուղ միջոցներին անցեալ տարվայ ընթացքում ձրիապէս ուղարկել է մեզ «Ժայռի» համարները։

Նոյն ուսանողութիւնը սիրում է հաւատալ, որ յիշեալ և մնացած կովկասեան հայ և ռուս թերթերի խմբագրութիւնները, այլ և ուրիշ անձնաւորութիւններ Նոր-Ցարսնից աւելի մեծ զոհողութեամբ ընդառաջ կերթան մեր ծարաւին։

Էնդհանրապէս մենք կանխօրէն մեր անկեղծ շնորհակալութիւններն ենք յայտնում բոլոր այն հասարակական հիմնարկութիւններին, խմբագրութիւններին, հրատարակիչներին ու առանձին անհատներին, որոնք անցեալում ու առաջիկայում իրանց նուէրներով ու աջակցութիւններով հնարաւորութիւն են տուել և պիտի տան մեր զրկոյի հայ ուսանողութեան մօտիկից ծանօթ և երազէկ լինելու այն երկրի հետ, որի ցաւերին ու կարիքներին կոչված են ծառայելու նրանք։

Ի դիմաց պետ. բարձր. դիւղատնտեսական կուրսերի հայ ուսանողութեան՝

Ար. Յովհաննիսեան, Հ. Զոլախեան,

Արտ. Աւագեան

6. Գ.—Մնդրում ենք միւս թերթերին արտատպել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

—

«Times»-ի պարիզեան թղթակիցը գրում է. «Գերմանական արտաքին գործերի մինիստրութիւնը սովորել է աշխատել ամենատարբերակ միջոցներով, առաջին անկասկած է այն, որ նա ջանում է օգտվել նրանցից որքան կարող է։ Արտաքին գործերի նոր մինիստր Կիդերլէն-Վեխտերը հանգուցեալ Գոլդշտէյնի աշակերտն է։ Երբ Գոլդշտէյնը գործ ունեցաւ երկու պետութիւնների հետ, որոնց փոխադարձ բարեկամութիւնը նրան անցանկալի էր, նրա սիրելի կանոններից մինն էր՝ աշխատել ներշնչել նրանցից իւրաքանչիւրին հերթով թէ գերմանական կառավարութիւնը լորջ համաձայնութիւն է կապում միւսի հետ։ Այդ ըստ երևոյթին կատարվում է և այժմ Մեծ-Բրիտանիայի և Ռուսաստանի հետ՝ Պարսկաստանում երկուսի ունեցած շահերի և այդ հարցի նկատմամբ երկուստեք համաձայնութեան առիթով։ Ներկայ բոլորին պահանջվում է ընդգծել այն ակներև հակասութիւնը, որ նկատվում է ռուս-գերմանական համաձայնութեան—Պարկաստանում շահերի ռուսական ազդեցութեան վերաբերութեամբ—և անգլո-գերմանական համաձայնութեան բացակայութեան միջև—Բաղդադի երկաթուղագծի ու այն գծի վերաբերութեամբ, որ ժամանակով կարող է միացնել նրան Պարսից Ծոցի հետ։ Հենց այդ տեսակէտից էլ գերմանական մամուլի բիւրօյի իսկական գործելակերպը, որ չափով որ նա կարող է ազդել Եւրօպայի հասարակական կարծիքի վրա, արժանի է առանձին ուշադրութեան։ Ինչ վերաբերում է ռուսական և բրիտանական կառավարութիւններին, նրանց միջև սկսվել է այնպիսի բացարձակ մոքերի փոխանակութիւն, որ նրանց մէջ երկպառակութիւն սերմանելը բոլորովին անհնարին է, ինչպէս անհնար եղաւ երկպառակում ձգել սրանից հինգ տարի առաջ Ֆրանսիայի և Անգլիայի միջև մարրօկեան հարցի առիթով»։

ՀԱԿԱՑԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

—

Այս օրերս Վիտերբոում՝ Հռոմի մօտերը՝ սկսվելու է նէապօլիտանական կամօրրի գործի քննութիւնը, որ յայտնի է նաև կուոկոլօ գործ անունով։

1906 թ. մայիսի 23-ին գտնվեց անկողնում մորթված այն կինը, որ շատ լաւ յայտնի էր նեապօլիտանական հասարակ ժողովրդի մէջ «Սօրրենտինկա» անուան տակ։ Մինչև օրը ծովի ափին, Տօրէ-դէլ-Գրէկոյում ձկնորսները գտան Սօրրենտինկայի ամուսին Կուօկոլօի դիակը, խողխողված դաշոյնի վէրքերով։ Ի նկատի ունենալով որ ամուսինները պատկանում էին նէապօլիտական La mala vita կամօրրին. ընականաբար սպանութիւնը վերագրվեց այդ գաղտնի ընկերութեան։

Սակայն այս կասկածի հաստատման համար, յանցանքի երևոյթան Տօրէ-դէլ-Գրէկոյի պանդոկներից մինում ուրախ ճաշում էին մի քանի յայտնի կամօրրիստներ իրանց ահարկու առաջնորդ Էնրիկո Ալֆանօյի հետ։ Բոլորն էլ խկոյն և եթ ձերբակալվեցին, սակայն գատական քննութիւնը լոյս չը սփռեց այդ մութ գործի վրա և 2 ամիս չանցած ձերբակալվածներին ստիպված ազատ թողին։

Անցաւ մօտ մի տարի և երկնակի ապացոյցները սկսում էր արդէն մոռացվել, երբ գործը անապատելի կերպով մտաւ նոր փուլի մէջ։ Աւագ ոստիկան կապէնցուօրին, որ դարձաւ խուզարկու գործակալ իշխանութեան թոյլտուութեամբ, աջողվեց արհեստական և նոյնիսկ սիրային փոքրերով ձեռք բերել կարևոր տեղեկութիւններ։ Նա միջնորդեց ներսումն շնորհելու երիտասարդ կամօրրիստ Արատէմաշիօին, որ դրա փոխարէն խոստացաւ սենսացիոն մերկացումներ անել։ Սակայն, Էնրիկոյին (Էրիկոն) հաւանօրէն իր ժամանակին նախազգուշացրել էին այդ մասին, որովհետև նա փախաւ Ամերիկա առաջ քան իշխանութիւնները Արատէմաշիօյից տեղեկացան, որ Կուօկոլօն և Սօրենտինկան մահվան էին դատապարտված 32 կամօրրիստների վճռով, որոնք խորհրդակցութեան էին ժողովվել Բանվիլում 1906 թ. մայիսին։

Կատարվեցին բազմաթիւ ձերբակալութիւններ, ի միջի այլոց Էրիկոնէն ընկաւ ամերիկեան ոստիկանութեան ձեռքը և ուղարկվեց Նէապոլ։ Մեղադրեալների թիւում, որոնք մօտ 40 հոգի են, սկզբում գտնվում էր հետաքրքրական մի անձնաւորութիւն—կամօրրի քահանան՝ Զիրօ Վիտօցին, որը սակայն մեռաւ բանտում մինչև քննութեան վախճանը։

Այս հսկայական գործի զլխաւոր խնդիրը մեղադրեալներին Վիտերբու տանելն էր։

Նրանք մեկնեցին Նէապոլից արտակարգ գնացքով դեկտեմբերի 25-ին, իսկ նրանց հաւկից հեկեկում և լալիս էին նրանց կանայք, որոնք նոյնիսկ ձեռնամարտի բռնվեցին զինուորների հետ մեղադրեալներին մնաս բարով ասելու համար։ Հռոմում գնացքը կանգ չառաւ այլ խկոյն դիմեց, Վիտերբ, որի բնակիչները շատ յուզվեցին այդ տեսակ վտանգաւոր յանցաւորների գալուց։ Բացի այդ, քաղաքում յայտնվեցին մեղադրեալների բարեկամներից շատերը, որի պատճառով իշխանութիւնները հարկաւոր գտան ուժեղացնել ոստիկանութեան թիւը։ Վերջապէս Վիտէրբ հասան նաև այդ ահռելի գործի փաստաթղթերը, որոնք կշռում են ոչ ութ, ոչ պակաս—5 պուդ։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

— Անգլիական պարլամենտի բացումը.—Յունվարի 24-ին Գէորգ թագաւորը թագուհու և Ուէլսի պրինցի ներկայութեամբ հանդիսաւորապէս կը բանայ անգլիական պարլամենտը։ Այդ դէպքի բացառիկ հետաքրքրութիւնը կայանում է նրանում, որ թագաւորը բացի սովորական գահական ճառից կարտասանէ անգլիական թագաւորների երգումը՝ բողոքական եկեղեցուն հաւատարիմ լինելու մասին պարլամենտի հաստատած նոր բանաձևով։

— „P. M."-ին հեռագրում են, որ Գէորգ թագաւորի թագադրութեան օրը յայտարարվելու է գործադուլ միաժամանակ մեծ-բրիտանական, գերմանական և ամերիկեան նաւահանգիստներում։ Գործադուլը թագադրութեան հետ հասարակ պատահականութիւն է։

— Մոսկվայի ուսումնարանական շրջանի հոգաբարձու, լուրերին նայած, նշանակվում է Մոսկվայի համալսարանի ռեկտոր պրոֆ. Ա. Ա. Տիխոմիրովը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՄՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ա.ՄԻՆ or, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վենէրական (սիֆիլիս) հ.։
Ն. Մ. ԶԻՒՕՎԱՆԸ—9½—10 ժ. աչքի, ականջի և ներքին հիւանդութիւնների։
Զ. Ի. ԲԱՐԱՆՈՎՍԿԱՆ—10—11 ժ. մարկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՌԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վենէրական, վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ ԲԺԻՇԿ Գ. Ս. ԶԻԼԲԵՐԶԱՑ—12½—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Գ. ԴԱՐԱԳԵՏՑԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱԶԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
ԵՐԵԿՈՆՆԵՐԸ
ԿԻՆ ԲԺՇԿ Գ. Ս. ԶԻԼԲԵՐԶԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՌԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Զքաւրները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
3. 0—3

ԲԺԻՇԿ
Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՑՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Առանձնապէս ՍՏԱՄՈՔԻՍ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։
Ընդունելութիւն (10—11 ժ. առ. (երեխաների)
ամեն օր (5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Մի-քայլելեան փող., № 36. Տելեֆոն № 388.
(հ. հ. կ.) 909. 100—65

ԲԺԻՇԿ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Ականջի, բերանի, բկի,
հիւանդութիւններ,
Ընդունելութիւնը (առաւօտեան 9—1 ժամը.
(երեկոյեան 5—7 ժամը.
Վելեմինսկայա փ. № 13, տ. Սէյլանովի, 3-րդ գիմնազիայի կողքին։
(օ. մ.) 1227. 100—31

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վենէրական և կաշուի հիւանդութիւնների։
Սէֆիլիսի բժշկութիւն Հրլիխի «606»-ով
Ընդունելութիւն (12½—2 ժ. ցերեկվայ։
(երեկոյեան (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.
Հասցէն (Սօլօլակ, Բէբուտովսկայա, № 33.
(Sololaki, угольъ Бебутовской и Паскевича, 33
(չ.ու.կ.) 1134. 100—54

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ատամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրոֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տել. № 1067.
(օ. մ.) 1179. 100—51

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԱԳ ԵՒ ՀԻՄՆԱՒՈՐԱՊԷՍ ՆԵՐԿԱՅՈՒՄ ԵՆ ՄԱԶԵՐԸ ԵՒ ՄԻՐՈՒՔԸ
ՄԱԶԵՐԻ ՆԵՐԿՈՎ
ԸՆԿՈՅԶԻ ՀԻՒԹԻՑ
Պարֆիւմերիայի
№ 4711.

Անվնասակարութեան համար երաշխաւորութիւն
ԻՍԿԱԿԱՆԸ ՄԻԱՑՆ ՄԱՐԿԱՑՈՎ
ՊԱՐՖԻՒՄԷՐԻԱ
ՖԷՐԴ. ՄԻՒԼԳԷՆՍ
№ 4711.
Կէօլն—Բէյրի վրա։ Հիմնված 1792 թ.։ Բաժանումները Բիւգայում։
Մատակարար շատ Բարձրագոյն Պալատների։
Ծախվում է դեղատներում, դեղանային և պարֆիւմէրային խանութներում։
(M. 436432/436450) 32. 6—1

ԵՐԿԱԹԷ ՊԱՏՐԻԱՐՔ ՎԵՀԱՓԱՌ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ տիշատակին նուիրված Ցարազի յատուկ №-ամանակի 28 պատկերը այլևս հատով չէ վաճառվում. սակաւաթիւ օրինակները կը տրվեն ԱՂԲԻՒՐԻՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԻ և ՏԱՐԱԶԻՆ, նրանց, որոնք միանուագ բաժանորդ կը գրվեն ԱՂԲԻՒՐԻՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԻ և ՏԱՐԱԶԻՆ, ուղարկելով բաժանորդագրի հետ ևս 2 ր.։ Սրանք կը ստանան ալմանախի №-ը, 18 գոյնով Վեհափառ Իզմիրլեանի Սանտնի դարաւոր հոյակապ կամարների տակ մեծադիր պատկերը, 1911 թ. օրացոյց, 6 տեսակ պօստ-կարտեր Վեհափառ Իզմիրլեանի և նրա շուրջը։ Մինչև Մեծ-Պասը նրանք, որոնք կամենում են զարդարել իրանց տունը Վեհափառ Իզմիրլեանի 18 գոյնով մեծադիր պատկերով, պէտք է ուղարկեն 1 ր. 50 կ.։ Պատկերը կուղարկվի յատուկ խողովակի մէջ։ Վերադիր վճարով՝ 2 ր.։ Դիմել՝ ТИФЛИСЪ. Редакція „АГБЮРЪ-ТАРАЗЪ".
ԱՂԲԻՒՐԻՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԻ, ՏԱՐԱԶԻ տարեկան բաժանորդագրութիւնը պրեմիաներով, յաւելուածներով 10 ր. (արտասահման 18 ր.), դպրոցական աշակերտի հասցէով 5 ր.։
(չ. ու.) 30. 0—1

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրինութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միքայէլեան պր. 24/4.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատոհստատներ։
Գործնական դասընթացքները կատարվում են կուրսերում Լօնդոնի Pitman և Պարվի Pigier դպրոցների ձեւով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նկատիներ առնվում են բէալ կեանքից։ Առարկաներն են՝ ա) պարտադիր. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., կրկն., ֆրանս., ամերիկան, բանկային և գործեն.